ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

28 մարտի հինգշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

43
(2893)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՒՄ ՔԱՈՍ Է

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովում քաոս է. աշխատակիցները, իրար հաջորդելով, դիմումներ են ներկայացնում:

Մի փոքր հետ գնանք եւ վերհիշենք, թե ինչ կատարվեց նախորդ տարեվերջին Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի շուրջ: 2023 թվականի դեկտեմբերի 6-ին ԿԿՀ նախկին նախագահ Հայկուհի Հարությունյանը եւ ԿԿՀ անդամ Նարինե Ավետիսյանը ինքնաառաջադրվելուց հետո չընտրվեցին եւ հետո լքեցին ԿԿ հանձնաժողովը:

Այժմ գրեթե 3 ամիս այս հանձնաժողովը մնացել է առանց նախագահի եւ անդամների ամբողջական կազմի:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի հայտարարագրերի վերլուծության վարչության պետը՝ Կարեն Հակոբյանը, այս տարվա մարտի սկզբին լքեց իր պաշտոնը: Ըստ մեր տեղեկությունների՝ նրա պես շատերն են ուզում լքել հանձնաժողովը՝ դժգոհելով եւ՛ հաստիքների համար քիչ վարձատրվելուց, եւ՛ բարդ ու մտավոր ծանր աշխատանքի անպտղությունից:

Տեղեկացանք նաեւ, որ հանձնաժողովում բարդ աշխատանքների հետ մեկտեղ նախագիծ չի առաջարկվում հաստիքացանկն ավելացնելու համար, նաեւ աշխատանքի վարձատրությունները կատարած աշխատանքի դիմաց շատ ահամաչափ քիչ են:

Ստացվում է, որ իշխանությունները ԿԿՀ նախագահի եւ անդամի ընտրությունները որոշ ժամանակով սառեցրել են, որ գտնեն իրենց «սրտի» ԿԿՀ նախագահին, որպեսզի քաղաքական վրեժ լուծեն ընդդիմախոսներից, եւ հանձնաժողովը աչք փակի կոռուպցիոներ ՔՊ-ականների հարստացման վրա: Փաստը ցույց է տալիս, որ ՔՊ-ում չունեն իրենց նախընտրելի մարդուն, որը հեշտությամբ կկոծկի իրենց իսկ կոռուպցիոն քայլերը:

Վերաբրենդավորված «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ն, որը 2023 նոյեմբերի 17-ից վերանվանվել է «Ամիո բանկ», սնանկության դատարանի միջոցով հարկադիր սնանկացման է տանում ընկերությունների եւ քաղաքացիների: «Ժողովուրդ» օրաթերթը դատական տեղեկատվական համակարգից տեղեկացավ, որ նոր անվանափոխված «Ամիո» բանկը արդեն երեք անձի մասով դիմում է ներկայացրել սնանկության դատարան: Մասնավորապես, հարկադիր սնանկացման է տանում Անդրանիկ Ղազարյանին, Սուսաննա Դավթյանին, «Կուրուս» ՍՊԸ-ին: Ինչով կավարտվեն նոր՝ անվանափոխված բանկի հայցերը, հայտնի չէ. մենք կհետեւենք զարգացումներին:

Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Գուրգեն Արսենյանը ՔՊ-ից նեղացած է: Բանն այն է, որ երբ 2021 թվականի խորհրդարանական ընտրություններն են եղել, նրան ասվել է, որ իր մանդատը ժամանակավոր բնույթ է կրելու, եւ որոշ ժամանակ անց նրան կդարձնեն դեսպան: Տեւական ժամանակ է՝ Արսենյանի ագրեմանը ուղարկել էին Ռուսաստանի Դաշնություն, սակայն այն չի հաստատվել, եւ գործարար պատգամավորի՝ դեսպան դառնալու պլանները ձախողվել են: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ նա երկրում չէ, տեւական ժամանակ է՝ լքել է Հայաստանը: Երեկ «Հրապարակ»-ը գրեց, որ Գուրգեն Արսենյանը դուրս է եկել ՔՊ խմբակցությունից: «Ժողովուրդ» օրաթերթը կապվեց պատգամավորի հետ, որն ասաց, որ երկրում չի եւ տարածված լուրերը համարեց դեզինֆորմացիա: Նա կտրուկ հերքեց ՔՊ խմբակցությունից դուրս գալու տեղեկությունը, բայց «Ժողովուրդ» օրաթերթն իր աղբյուրներից տեղեկացավ, որ Արսենյանը, այնուամենայնիվ, կհեռանա ՔՊ-ից, եւ հեռացումը խորը արմատներ ունի, որին կանդրադառնանք առաջիկայում:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ ՀՀ քննչական կոմիտեն իրազեկել է ԲԴԽ-ին, որ մտնում է Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ քննչական գործողությունների: Մեզ հասած լուրերի համաձայն՝ իրազեկելուց հետո մտել են դատարան, քննչական գործողություններ են կատարել: Ավելին՝ ըստ լուրերի՝ գեներալ Մանվել Գրիգորյանի դատավոր դստերը՝ Նաիրա Գրիգորյանին եւս օգնականի մասով մի քանի հարցեր են տվել: Հիշեցնենք, որ ՀՀ քննչական կոմիտեն հաստատել էր ArmLur.am-ի տեղեկությունները, որ իրավապահները կալանավորել են Արմավիրի մարզի դատավոր Նաիրա Գրիգորյանի օգնականին: Ըստ կոմիտեի՝ անձին ներկայացվել է մեղադրանք՝ առանձնապես խոշոր չափերով խարդախություն կատարելուն օժանդակելու համար: Նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրված կալանքը: Այլ տեղեկատվություն այս պահին հրապարակման ենթակա չէ: Նշենք, որ դատավոր Նաիրա Գրիգորյանը գեներալ Մանվել Գրիգորյանի դուստրն է:



ԶՐՈՒՅՑ

«ՍԱ ՀԵՐԹԱԿԱՆ ՄԵԾ ՄԱՆԻՊՈՒԼՅԱՑԻԱՆ Է», Թ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի ասուլիսից հետո, երբ նա հարցականի տակ դրեց Տավուշի մարզի մի քանի գյուղերի ճակատագիրը, մեծ աղմուկ բարձացավ: Նա արեց հայտարարություններ, ըստ որոնց՝ հերքում է այդ գյուղերի՝ Հայաստանին պատկանելու փաստը:

ArmLur.am-ը զրուցել է Ազգային Ժողովի «Պատիվ ունեմ» խմբակցության պատգամավոր Թագուհի Թովմասյանի հետ: Պատգամավորի հետ փորձել ենք հստակեցնել եւ պարզաբանել, թե որն է այն հիմքը, որով Փաշինյանը հայկական չի համարում Տավուշի ներկայիս գյուղերը: Եզրակացրինք, որ նույնիսկ ՀՀ Սահմանադրությամբ նման կարգավորում չկա:

-Տիկին Թովմասյան, ուզում եմ միասին քննարկենք Նիկոլ Փաշինյանի սպառնալից հայտարարությունները՝ կապված Տավուշի մարզի հանձնվելիք գյուղերի հետ: Կան հիմքեր, ըստ որոնց՝ այդ գյուղերը Հայաստանին չեն պատկանում, ինչպես նշում է Փաշինյանը:

-Ուզում եմ ասել, որ սա հերթական մեծ մանիպուլյացիան է Նիկոլ Փաշինյանի կողմից, եւ կարելի է ասել՝ մեծ հանցագործություն, որովհետեւ Նիկոլ Փաշինյանը՝ որպես երկրի ղեկավար, որպես ՀՀ վարչապետ, ունի հստակ առաքելություն: Երբ որ երդվում էին կառավարության բոլոր անդամներով, նրանք, այդ թվում՝ վարչապետ Փաշինյանը, երդվում էին ծառայել Հայաստանի Հանրապետությանը եւ օրենքներին եւ պահպանել ՀՀ Սահմանադրությունը: Հիմա ո՞ր օրենքի որ կետի համաձայն է Նիկոլ Փաշինյանը նման հայտարարություններ անում: Ես չեմ գտնում այդպիսի կետ, անկեղծ ասած, եւ դիմել եմ Նիկոլ Փաշինյանին, որպեսզի ինձ տա փաստարկված տեղեկություն, թե ինչ հիմքեր ունի իր հայտարարությունը, որ Տավուշի մարզի կոնկրետ գյուղեր մերը չեն: Նույնիսկ նա թիմակիցների հետ իր ներքին խոսակցությունների ժամանակ ասում է, որ բոլոր քարտեզները իրար հակասում են, այսինքն՝ Ադրբեջանում առկա եւ Հայաստանում առկա՝ գլխավոր շտաբի քարտեզները հակասում են իրար. բա ինչի՞ հիման վրա եք դուք հայտարարում, որ դրանք մերը չեն: Ո՞ր միջազգային պայմանագրի հիման վրա է Փաշինյանը ասում, որ այդ տարածքները մերը չեն. չկա այդպիսի պայմանագիր: Հետեւաբար այդ մեծ մանիպուլյացիան եւ խաբեությունը եւ սեփական ժողովրդին ահաբեկելը ոչ այլ ինչ է, քան անպատասխանատվություն՝ վարչապետի կարգավիճակից բխող խելահեղ ռիսկերով: Եւ նաեւ կուզենայի ուշադրություն հրավիրել հետեւյալի վրա. կհիշեք՝ 2021 թվականին ելույթ էր ունենում, նախընտրական եռուզեռի մեջ էր, ասում էր՝ ձեռքերս կկտրեն, ես չեմ ստորագրի Բարխուդարլու եւ այլն, որ տամ իրենց: Հիմա եթե ձեռքդ չես կտրի, ի՞նչը պիտի կտրվի, որ տալիս ես, այսինքն՝ ինչո՞ւ ես դու քո խոսքերին հակադրվում:

-Տիկին Թովմասյան, որոշ ժամանակ առաջ խոսք էր գնում, որ Հայաստանը չունի «կադաստրի վկայական»: Կապո՞ւմ եք այս երկու իրողությունները իրար, երբ մենք չունենք «կադաստրի վկայական», եւ Փաշինյանն ասում է՝ այս գյուղերը մերը չեն:

-Ես ուզում եմ նախ հասկանալ՝ ով պիտի տա մեզ այդ «կադաստրի փաստաթուղթը», ով է կադաստրը տվյալ դեպքում: Եթե կադաստրը միջազգային հանրությունն է, ցույց տվե՛ք ինձ միջազգային մի փաստաթուղթ, որտեղ գրված է, թե Հայաստանը որտեղ է սկսվում եւ որտեղ ավարտվում: Չկա այդպիսի փաստաթուղթ: Ալմա-Աթայի հռչակագրին որ հղում է արվում, այնտեղ որեւէ բան չկա տարածքային բաժանման մասին. այնտեղ երկրները ընդունում են միմյանց տարածքային ամբողջականությունը, իսկ տարածքային ամբողջականությունը որոշվում է սահմաններով, որոնք գոյություն ունեն այսօրեական:

Զրուցեց ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԸ

ՀԱՅԱՍՏԱՆ-ԱՐԳԵՆՏԻՆԱ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Մարտի 26-ին Բուենոս Այրեսում գտնվող ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանն այցելել է Միջազգային հարաբերությունների արգենտինական խորհուրդ:

Ինչպես հայտնում են ՀՀ ԱԳՆ-ից, կայացել է նախարար Միրզոյանի հանդիպումը խորհրդի նախագահ Ֆրանցիսկո դե Սանտիբանյեսի եւ ղեկավար կազմի հետ, որից հետո Արարատ Միրզոյանը գրառում է կատարել պատվավոր հյուրերի մատյանում:

Հաջորդիվ ՀՀ արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավարի մասնակցությամբ անցկացվել է հանգամանալից քննարկում խորհրդի անդամների եւ հյուրերի հետ: Իր ներածական խոսքում Արարատ Միրզոյանն անդրադարձել է Հայաստան-Արգենտինա միջպետական հարաբերությունների դինամիկային, քաղաքական երկխոսության օրակարգին, իր այցի շրջանակներում եւ նախորդ բարձրաստիճան շփումների ժամանակ քննարկված՝ համագործակցության զարգացման ներուժ ունեցող հիմնական ուղղություններին:

Նախարար Միրզոյանը նշել է, որ ունեցած հանդիպումների ժամանակ իր երախտիքն է հայտնել դեռ նախորդ դարասկզբին Հայոց ցեղասպանությունից հետո Արգենտինայում հայերին ապաստան տալու, ապա ձեւավորված հայ համայնքի դերի արժեւորման համար, ինչի արդյունքում հայկական ներկայությունն այսօր յուրովի նպաստ է բերում Արգենտինայի հասարակական-քաղաքական կյանքին:

Քննարկման ու հարցուպատասխանի ձեւաչափով նախարար Միրզոյանն անդրադարձել է նաեւ ավելի լայն՝ ՀՀ արտաքին քաղաքական, Հարավային Կովկասում անվտանգային իրավիճակին վերաբերող հարցերի:

ՀՀ արտաքին քաղաքական առաջնահերթությունների մասով նախարար Միրզոյանը շեշտել է, որ դրանք հիմնված են ՀՀ պետականության, ինքնիշխանության շարունակական ամրապնդման, ՀՀ համար կայուն զարգացման միջավայրի ապահովման նպատակների վրա: Ներկայացվել են ինչպես հարեւան երկրների հետ հարաբերությունների կարգավորման, այնպես էլ լայն աշխարհագրությամբ այլ երկրների ու կառույցների հետ փոխգործակցության առանձնահատկություններն ու հեռանկարները:

Անդրադառնալով Հարավային Կովկասում 2020 թվականից ի վեր ստեղծված իրադրությանը՝ Արարատ Միրզոյանը ներկայացրել է Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հարաբերությունների կարգավորման գործընթացի վերջին զարգացումները: Արարատ Միրզոյանը շեշտել է տարածքային ամբողջականության աներկբա ճանաչման հանձնառության եւ 1991 թ. Ալմա-Աթայի հռչակագրի հիման վրա սահմանազատման հետագա գործընթացն իրականացնելու անհրաժեշտությունը:

Տարածաշրջանային տնտեսական եւ տրանսպորտային կապուղիների ապաշրջափակման համատեքստում նախարար Միրզոյանն անդրադարձել է նաեւ ՀՀ կառավարության կողմից մշակված «Խաղաղության խաչմերուկ» ծրագրին եւ ընձեռնվող տնտեսական հնարավորություններին:

ՀՀ ԱԳ նախարարը պատասխանել է ներկաներին հետաքրքրող այլ հարցերի:

ԱԶԱՏՎԵԼ Է ԱՇԽԱՏԱՆՔԻՑ

Երեւանի Նաիրի Զարյանի անվան թիվ 130 դպրոցի տնօրեն Նվարդ Հովսեփյանն ազատվել է աշխատանքից:

Այս մասին տեղեկացնում է քաղաքապետարանի մամուլի խոսնակ Հայկ Կոստանյանը:

«Երեւանի Նաիրի Զարյանի անվան թիվ 130 դպրոցի տնօրեն Նվարդ Հովսեփյանն ազատման դիմում է ներկայացրել, որն ընդունվել է»,- ասաց Կոստանյանը:

Նշենք, որ վերջինս մեղադրվում է պետական միջոցների յուրացման եւ փաստաթղթի կեղծման համար: Ընթանում է նախաքննություն:

Ավելի վաղ անդրադարձել էինք Երեւանի Նաիրի Զարյանի անվան հ. 130 հիմնական դպրոցում կատարվող իրադարձություններին, հայտնել, որ փոխտնօրենները դուրս են եկել տնօրենի դեմ, նրանք իրենց զբաղեցրած պաշտոններից լիազորությունները դադարեցնելու վերաբերյալ դիմում են ներկայացրել: Ըստ փոխտնօրենների՝ պատճառն այն է, որ տնօրենն անտեսում է իրենց բարձրացրած հարցերը, չի զբաղվում հաստատության խնդիրներով:

Երեւանի քաղաքապետի համապատասխան կարգադրությամբ դպրոցի տնօրենին տրվել էր չվճարվող արձակուրդ՝ պարտականությունների կատարումը վերապահելով տնօրենի ուսումնական գծով տեղակալին:

ՏՈՄՍԻ ԱՐԺԵՔԸ՝ 1 ՄԼՆ ԴՐԱՄ

«Իմ քայլը» բարեգործական հիմնադրամը նախաձեռնում է «Հաջողակ կին գործարարների աջակցությունը՝ սկսնակ կին գործարարներին» բարեգործական ընթրիք, որից ստացված ամբողջ հասույթն ուղղվելու է ՀՀ մարզերում գործունեություն ծավալող սկսնակ կին գործարարներին:

Բարեգործական ընթրիքը տեղի կունենա ապրիլի 14-ին «ԱրմԱս» գինու գործարանում: Երեկոյի հյուրերի համար զբոսավարի ուղեկցությամբ կկազմակերպվի շրջայց գործարանի արտադրական տարածքում. սկսնակ կին գործարարների արտադրանքների ցուցահանդես-վաճառք: Ընթրիքը կուղեկցվի ETHNO COLORS բենդի էթնիկ հայկական եւ ժամանակակից պարային կատարումներով, կայացած եւ սկսնակ կին գործարարների ելույթներով, վիճակահանությամբ կխաղարկվեն նվերներ:

Ընթրիքին մասնակցելու համար անհրաժեշտ է գնել տոմս: Մեկ տոմսի արժեքը 1 մլն ՀՀ դրամ է, որը կփոխանցվի ՀՀ մարզերում գործունեություն ծավալող որեւէ սկսնակ կին գործարարի: Տեղերը սահմանափակ են: Խնդրում ենք տոմսերը ձեռք բերել մինչեւ ապրիլի 10-ը: Տոմսերը ձեռք բերելու համար զանգահարել 044 444 761 հեռախոսահամարով կամ նամակ գրել info@mystep.foundation էլեկտրոնային հասցեին:

Բարեգործական ընթրիքը լուսաբանվելու է «Իմ քայլը» հիմնադրամի կողմից:

ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔ ՉՈՒՆԻ

«Զվարթնոց» միջազգային օդանավակայանից Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի դուրսբերման հարցը որոշված է, իսկ հայ-թուրքական սահմանից նրանց դուրսբերման հարց չի քննարկվել. լրագրողների հետ զրույցում այս մասին ասաց Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանը:

Խոսելով «Զվարթնոց» միջազգային օդանավակայանից Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի դուրսբերման հարցի մասին՝ Սիմոնյանը նշեց, որ Հայաստանի համար դա արդեն որոշված թեմա է, եւ այստեղ այլեւս քննարկում չկա:

«Փորձ է արվում այս գործընթացը ներկայացնել իբրեւ միջպետական պայմանագրի խախտում: Սա եղել է միջգերատեսչական համաձայնություն, որի նպատակը եղել է այդ տարածքում օգնել հայ սահմանապահներին, թեթեւացնել նրանց բեռը: Այլեւս այդ բեռը թեթեւացնելու կարիք չկա: Մենք տեղեկացրել ենք՝ շնորհակալ ենք, օգնեցիք, բայց այլեւս Հայաստանի Հանրապետությունն այդ օգնության կարիքը չունի: Մենք կարող ենք մեր օդանավակայանը ինքներս սպասարկել, եւ մեր սահմանապահները նույնպես կարող են իրենց առջեւ դրած խնդիրը լուծել:

Հիմա էլ խոսում են, թե Թուրքիայի սահմանը ով է պահելու. ես շատ խիստ կասկած ունեմ, որ Թուրքիան որոշի Հայաստանի Հանրապետության վրա հարձակվել, ռուս սահմանապահները կարողանալու են կամ գործելու են եւ պաշտպանելու են»,-ասաց Սիմոնյանը:

Դիտարկմանը, թե նշված հայտարարությունից կարելի է ենթադրել, որ Հայաստանն առաջիկայում կորոշի հայ-թուրքական սահմանից էլ դուրս բերել ՌԴ սահմանապահներին, Սիմոնյանը պատասխանեց, որ նման խոսակցություն չի եղել, ինքը պարզապես արձագանքում է վերլուծաբանների կարծիքներին:

ԺԱՄԱՆԵԼ ԵՆ

Հայաստանում Ֆրանսիայի դեսպան Օլիվիե Դըկոտինյին եւ Հայաստան ժամանած ֆրանսիացի պատգամավորները ծանոթացել են Սոթքի ոսկու հանքավայրի շրջակայքում տիրող անվտանգային իրավիճակին:

Այս մասին գրառում է արվել Հայաստանում Եվրոպական Միության դիտորդական առաքելության X-ի միկրոբլոգում:

«Ուրախ էինք Մարտունիում (խմբ. Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաք) հյուրընկալել Հայաստանում Ֆրանսիայի դեսպան Օլիվիե Դըկոտինյիին եւ Ֆրանսիայի Ազգային ժողովի պատգամավորներին: Նրանց հետ կիսվել ենք այդ հատվածում մեր գործունեությամբ եւ Սոթքի ոսկու հանքավայրի շրջակայքում անվտանգային զարգացումներով»,- նշվում է գրառման մեջ:

Հայաստան ժամանած ֆրանսիացի խորհրդարանականների պատվիրակության կազմում են Ֆրանսիայի խորհրդարանում Հայաստանի հետ բարեկամական խմբի ղեկավար Ան Լորենս Պետելը, բարեկամական խմբի փոխնախագահ Ժան-Ֆրանսուա Պորտարիեն, պատգամավորներ Էլիսա Մարտինը, Հերվի

Դե Լեպինյոն, Լիլիանա Տանգին, Սիլվիե Բոնետը եւ Քլեռ Գիչարդը:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻ ՑԱՆՑ»

ՊԱՀՆ Է ՀԱՄԱՐՁԱԿ ՔԱՅԼԵՐ ՁԵՌՆԱՐԿԵԼՈՒ

Դանիայի նախկին վարչապետ եւ Հյուսիսատլանտյան դաշինքի նախկին գլխավոր քարտուղար Անդերս Ֆոգ Ռասմուսենի կողմից ղեկավարվող «Հայաստանի բարեկամների ցանց» բարձր մակարդակի խումբը, որի մասնակիցների թվում են նախկին վարչապետներ, խորհրդարանականներ եւ դիվանագետներ, պատրաստել է զեկույց, որում անդրադարձ է կատարվում Հայաստանի ու Եվրոպական Միության միջեւ հարաբերություններին, դրանց հետագա ամրապնդման անհրաժեշտությանը, Հայաստանի՝ կազմակերպությանը վերջնական անդամակցելուն, ինչպես նաեւ Հարավային Կովկասում առկա իրադրությանն ու Հայաստանին սպառնացող վտանգներին:

Ինչպես տեղեկանում ենք զեկույցից, հեղինակներն ընդգծում են այն քայլերը եւ գործողությունները, որոնք Եվրոպական Միությունը պետք է իրականացնի՝ հաշվի առնելով Հայաստանի համար առկա խնդիրներն ու սպառնալիքները:

Զեկույցի հեղինակների կարծիքով՝ այժմ պահն է համարձակ քայլեր ձեռնարկելու եւ էական աջակցություն ցուցաբերելու Հայաստանի Հանրապետությանը:

Զեկույցում նշվում է, որ Եվրոպական Միությունը նախկինում դժկամությամբ է վերաբերվել անվտանգության ոլորտում Հայաստանի հետ համագործակցությանն այն պատճառով, որ կազմակերպությունը միջնորդական դեր պահպանելու ցանկություն է ունեցել, սակայն Ադրբեջանի կողմից Հայաստանի նկատմամբ իրականացվող քաղաքականությունը ցույց է տվել, որ Բաքուն այդքան էլ շահագրգռված չէ խնդիրների բանակցային կարգավորմամբ: Ընդհակառակը, Լեռնային Ղարաբաղի դեմ հարձակումը միայն ամրապնդել է այն միտքը, որ նա կրկին կարող է դիմել ռազմական տարբերակի, ուստի ԵՄ-ն պետք է վերակողմնորոշի իր ներգրավվածությունը տարածաշրջանում, որպեսզի միջնորդելու փոխարեն փորձի ուժեղացնել Հայաստանի դիմադրողականությունը՝ կանխելու մեկ ուրիշ պատերազմ: Այդ իսկ պատճառով անհրաժեշտություն կա ուժեղացնել Եվրամիության եւ Հայաստանի միջեւ համագործակցությունն անվտանգության ոլորտում ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ հեռանկարում:

Համահեղինակներն ընդգծում են, որ ԵՄ-ն պետք է Հայաստանին առաջարկի աստիճանական, բայց որոշակի ճանապարհային քարտեզ՝ դեպի ընդլայնված հարաբերություններ: Սա ներառում է Հայաստանին ԵՄ թեկնածուի կարգավիճակ առաջարկելը: Նման առաջարկը պետք է պաշտպանված լինի իրական, բովանդակային աջակցությամբ:

Ներկայացված զեկույցում նշվում է, որ Հայաստանը հայտնվել է անվտանգության խիստ անկայուն միջավայրում՝ վկայակոչելով այն հանգամանքը, որ Ադրբեջանը շարունակում է սպառնալիք ներկայացնել եւ ազդանշան է տալիս, որ Հայաստանի դեմ հարձակման է պատրաստվում:

Զեկույցը հիշեցնում է, որ Ադրբեջանի կողմից դեռեւս 2021 եւ 2022 թվականների հարձակման հետեւանքով Հայաստանի շուրջ 200 քառակուսի կիլոմետր սուվերեն տարածք գտնվում է օկուպացիայի տակ, ինչն ուղղակի վտանգ է ներկայացնում ՀՀ ինքնիշխանության համար, իսկ անդրադառնալով Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի հայտարարություններին՝ զեկույցում ասվում է, որ դրանով Բաքուն Երեւանի դեմ հետագա հարձակման համար փորձում է տեղեկատվական դաշտ ապահովել:

Մատնանշվում է նաեւ նախագահ Ալիեւի սպառնալիքները՝ ուղղված ՀՀ մայրաքաղաք Երեւանին, որի նկատմամբ եւս Ադրբեջանը չի թաքցնում իր հավակնությունները: Միեւնույն ժամանակ, նշվում է, որ Ադրբեջանը շարունակում է Հայաստանի տարածքով ցամաքային միջանցք պահանջել, որը չստանալու դեպքում սպառնում է ռազմական ուժ կիրառել՝ օկուպացնելու համար Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզը:

Զեկույցի հեղինակներն ընդգծում են, որ Թուրքիան եւս կարող է իր մասնակցությունն ունենալ, քանզի շարունակում է սերտորեն կապված լինել Ադրբեջանի հետ՝ հրաժարվելով բացել սահմանները Հայաստանի հետ եւ ճնշում գործադրելով վերջինիս վրա: Այդուհանդերձ, արձանագրվում է տարածաշրջանում Թուրքիայի դերի կարեւորությունը, եւ խոսվում Հայաստանի հետ հարաբերությունները բարձր մակարդակի հասցնելու անհրաժեշտության մասին:

Հաշվի առնելով վերոնշյալ բոլոր հանգամանքները՝ զեկույցում ընդգծվում է, որ անհրաժեշտ է ավելացնել ռազմական օգնությունը ԵՄ անդամ երկրներից, ինչը կարեւոր քայլ կլինի, որպեսզի Հայաստանն ավելացնի իր պաշտպանական կարողությունները եւ կարողանա դիմագրավել Ադրբեջանի հարձակումներին:

Խոսքը վերաբերում է ինչպես համատեղ վարժանքներին ու զորավարժություններին, այնպես էլ եվրոպական երկրների հետ ռազմական հարաբերությունների սերտացմանը: Այս քայլով Եվրոպական Միությունը նաեւ կարեւոր ազդակ կուղարկի Բաքվին եւ Անկարային:

Այս համատեքստում զեկույցի համահեղինակները կարեւորում են նաեւ ՀՀ զինված ուժերի բարեփոխումը եւ արդիականացումը՝ հավելելով, որ Հայաստանը նույնպես ժամանակակից արեւմտյան տեխնիկայի կարիք ունի:

Անդրադառնալով նաեւ Հայաստանի անդամակցությանը Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությանը՝ հեղինակները նշում են, որ այն քիչ արժեք ունի Հայաստանի համար անվտանգության առումով, քանի որ Ադրբեջանի կողմից իրականացված հարձակումներից հետո աչքի չի ընկել Հայաստանի նկատմամբ իր պարտավորությունների կատարմամբ, ինչի արդյունքում էլ ՀՀ-ն փաստացի սառեցրել է իր անդամակցությունը կազմակերպությանը՝ փորձելով դիվերսիֆիկացնել իր անվտանգության մեխանիզմները:

Բացի այս, զեկույցում ասվում է, որ Հայաստանի համար կարեւոր դեր կարող է ունենալ Թուրքիայի հետ զուսպ եւ ուղիղ երկխոսությունն ու հարաբերությունների կարգավորումը եւ հայ-թուրքական սահմանի բացումը:

ԱՄՆ

ՆՊԱՏԱԿ ՈՒՆԵՆ ԽՐԱԽՈՒՍԵԼՈՒ

«Հայաստանի եւ Ադրբեջանի կառավարությունների հետ յուրաքանչյուր գործընթացում մենք նպատակ ունենք խրախուսել նրանց՝ աշխատել երկու երկրների միջեւ տարաձայնությունները հարթելու եւ երկարատեւ ու կայուն խաղաղության համաձայնագրի հասնելու ուղղությամբ»,- լրագրողների հետ ամենօրյա ճեպազրույցի ընթացքում նշել է ԱՄՆ պետքարտուղարության խոսնակ Մեթյու Միլլերը՝ պատասխանելով հարցին այն մասին՝ արդյոք Բրյուսելում ապրիլի 5-ին նախատեսվող Փաշինյան-Բլինքեն-Ֆոն դեր Լայեն հանդիպման օրակարգում դիտարկվելու է քաղաքական, տնտեսական կամ անվտանգության ոլորտներում աջակցությունը:

Մեթյու Միլլերը հանդիպման մասին մանրամասներ չի հայտնել:

ՊԱՅԹՈՒՑԻԿ Է ԳՈՐԾԱՐԿՎԵԼ

ԿԱՋՄԱԿԵՐՊԵԼ Է ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅՈՒՆ

ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Գագիկ Մելիքոնյանը հրավիրվել է Քննչական կոմիտե եւ հարցաքննվել: ArmLur.am-ն հայտնի դարձավ, որ նրան հարցաքննել են իր տան բակ պայթուցիկ պայթեցնելու փրեական վարույթի շրջանակներում:

Նկատենք, որ ՔՊ գրասենյակի եւ Միավորված աշխատանքային կուսակցության հիմնադիր ղեկավար Գուրգեն Արսենյանի գրասենյակի մոտ պայթուցիկ տեղադրելու գործով կալանավորվածները չեն ընդունում առաջադրված մեղադրանքը: Գործով կալանավորվածներից մեկը ՀՅԴ անդամ Գագիկ Սարգսյանն է եւ Վահան Հովհաննիսյանը:

Այսպես, ըստ կոմիտեի՝ Գ.Ս.-ն բնակչությանն ահաբեկելու, հանրային իշխանության մարմինների գործունեությունը կազմալուծելու, հանրային իշխանության ներկայացուցիչ եւ հանրային ծառայող, ՀՀ ազգային ժողովի պատգամավոր, «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ Գուրգեն Մելքոնյանին քաղաքական կոնկրետ հայտարարություններից ու դիրքորոշումներից ձեռնպահ մնալուն հարկադրելու եւ այդպիսով հանրային իշխանության մարմիններին ներքին եւ արտաքին քաղաքականության հետ կապված հարցերի կոնկրետ լուծումներից ձեռնպահ մնալուն հարկադրելու նպատակով կազմակերպել է Ա.Գ.-ի եւ Է. Պ.-ի կողմից ահաբեկչություն, այն է՝ Գուրգեն Մելքոնյանի բնակության վայրի հարակից տարածքի քաղաքացիական անձանց կյանքից զրկելու, նրանց առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառելու վտանգով, ինչպես նաեւ խոշոր չափերի գույքային վնաս պատճառելով զուգորդված պայթյուն կատարելը:

Ըստ ՔԿ հաղորդագրության՝գործելով նույն դիտավորությամբ՝ Ա.Գ.-ն, Է.Պ.-ի հետ նախապես քննարկելով կատարվելիք գործողության մանրամասները, 2024 թվականի փետրվարի 10-ին իր բնակության վայրում նրան է փոխանցել նախապես պատրաստված, փշրտող գործողության տրոտիլ տեսակի պայթուցիկ նյութով լիցքավորված ինքնաշեն պայթեցման սարքը եւ այն գործարկման վիճակի բերելու համար անհրաժեշտ մարտկոց, բացատրել վերջինը պայթուցիկ սարքի մեջ տեղադրելու եղանակը: Դրանից հետո վերջիններս, կիրառելով քողարկման ու չբացահայտվելու համար անհրաժեշտ որոշակի միջոցներ, ուղեւորվել են դեպի Երեւան քաղաքի Նոյ թաղամասի նախապես որոշված հասցե, որտեղ Է.Պ.-ն, կարծելով, թե Երեւան քաղաքի Նոյ թաղամասի 143/1 հասցեում գտնվող առանձնատունը պատկանում է Գուրգեն Մելքոնյանին, Ա.Գ.-ի կողմից իրեն փոխանցված՝ ավերածություններ գործելու համար պիտանի պայթեցման սարքը պարսպի վրայից նետել է դեպի հիշյալ առանձնատան աջ անկյունային հատվածը: Նույն օրը՝ ժամը 04:30:02-ին, տեղի է ունեցել նշված պայթեցման սարքի պայթյունը, որը զուգորդվել է քաղաքացիական անձանց կյանքից զրկելու, նրանց առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառելու իրական վտանգով եւ առանձնատան սեփականատեր Ա.Բ.-ին պատճառել է առնվազն խոշոր չափերի գույքային վնաս:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՀԵՂԻՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏՔԵՐՈՎ

ՀԱՅՏՆԻ Է՝ ՈՒՄ Է ՄԱԿԱԳՐՎԵԼ ԳՈՐԾԸ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ «օրենքով գող» Արմեն Ղազարյանի՝ Պզոյի գործը մակագրվել է դատավոր Վահե Ջիվանյանին: Վերջինս այն դատավորն էր, որ 2022 թվականին միացել էր 93 դատավորների ստորագրահավաքին եւ մտահոգված լինելով դատավորների նկատմամբ իրենց գործունեության հետ կապված իրականացվող հետաքննություններով՝ պահանջում էր դատավորների ժողով հրավիրել:



Դատախազը 2024 թվականի մարտի 26-ին հաստատել է քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող Ա.Ղ.-ի վերաբերյալ մեղադրական եզրակացությունն ու վարույթի նյութերի հետ հանձնել դատարան: Այս մասին տեղեկացնում են Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունից:

«Հիշեցնենք, որ 2022 թվականի մարտի 21-ին դատախազը հանրային քրեական հետապնդում էր հարուցել Ա.Ղ.-ի նկատմամբ այն բանի համար, որ նա, ունենալով քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ, պահպանել է այն (Քրեական օրենսգրքի 322-րդ հոդվածի 1-ին մաս):

Ռուսաստանի Դաշնության Դոնի Ռոստով քաղաքում, քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձանց ներկայությամբ «թագադրվելով», ստացել է «օրենքով գողի»՝ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ եւ 2022 թվականի նոյեմբերի 1-ի դրությամբ շարունակել է պահպանել օրենքով չթույլատրվող այդ կարգավիճակը:

«Ա.Ղ.-ի նկատմամբ կիրառվել են համակցված խափանման միջոցներ՝ բացակայելու արգելք եւ 20 մլն դրամի չափով գրավ»,- ասված է հաղորդագրության մեջ:

Գլխավոր դատախազությունը, սակայն չի գաղտնազերծել, թե ով է այդ «օրեքով գողը»:

ArmLur.am-ը, սակայն, պարզեց՝ում մասին է խոսքը: Նա Արմեն Ղազարյանն է, որն առավել հայտնի է Պզո անունով:

Նշենք, որ 2022 թվականին ArmLur.am-ը գրել էր, որ Երեւանում՝ Մուրացան 109 հասցեից, ոստիկանության Էրեբունու բաժին բերման են ենթարկվել մեկ տասնյակից ավելի անձինք:

Բերման ենթարկվածների թվում են եղել «օրենքով գող» Պզոն՝ Արմեն Ղազարյանը, այլ անձինք եւս, որոնցից մեկը հայտնի է որպես Կաբելի տղա, որը շուտով պետք է դառնար «օրենքով գող»:

Նա մեղադրվում էր հավաք կազմակերպելու համար:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ

ԴԱՆԱԿԱՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչությունում իրականացվող քննությամբ պարզվել են Գյումրի քաղաքի բնակչի կողմից նախկին կնոջ ու նրա քրոջ նկատմամբ կատարված առերեւույթ սպանության փորձի հանգամանքները:

2024 թվականի մարտի 24-ին՝ ժամը 14:48-ին, Գյումրու բնակչուհուց հաղորդում էր ստացվել այն մասին, որ քրոջ նախկին ամուսինը իրենց շենքի շքամուտքում դանակահարել է իրեն ու 26-ամյա քրոջը: Ավելի ուշ «Գյումրի» ԲԿ-ից հայտնել էին, որ հիշյալ բնակչուհիները՝ մարմնի տարբեր հատվածներում կտրած-ծակած վերքերով, տեղափոխվել են հիվանդանոց:

Դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթով պարզվել եւ հիմնավորվել է, որ առերեւույթ դանակահարությունը կատարել է 27-ամյա երիտասարդ:

Նախաքննությամբ նաեւ փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ վերջինս մինչեւ դեպքի օրը նախկին կնոջ ու նրա հարազատների հասցեին պարբերաբար հնչեցրել է սպանության, առողջությանը վնաս պատճառելու, խոշոր չափի գույք ոչնչացնելու սպառնալիքներ:

Մասնավորապես, պարզվել է, որ 27-ամյա երիտասարդի եւ նրա նախկին կնոջ, քենու միջեւ, անձնական հարցերի հետ կապված, եղել են լարված, անբարյացակամ փոխհարաբերություններ:

Այդ պատճառով երիտասարդը մինչեւ դեպքի օրը շարունակաբար սպառնացել է նրանց, իսկ 2024 թվականի մարտի 24-ին՝ժամը 14:45-ի սահմաններում, վերջիններիս կյանքից զրկելու դիտավորությամբ գնացել է նրանց բնակության հասցե, սպասել շենքի բակում:

Նկատելով շենքին մոտեցող 32 եւ 27-ամյա քույրերին՝ երիտասարդը, գտնվելով ալկոհոլի ազդեցության տակ, քայլել է նրանց հետեւից, ապա ձեռքում պահած դանակով, միեւնույն ժամանակ սպառնալիքներ հնչեցնելով, թիկունքից հարվածել է նախ նախկին կնոջ մեջքի, սրտի եւ աջ ոտքի տարբեր հատվածներին, ապա դանակով հարվածներ է հասցրել նաեւ նրա քրոջը՝ քույրերին պատճառելով տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ: Սակայն, այլ անձի միջամտության արդյունքում երիտասարդը չի կարողացել ավարտին հասցնել հանցագործությունը, ինչից հետո դիմել է փախուստի: Ձեռք բերված բավարար փաստական տվյալների հիման վրա՝նրա նկատմամբ, ՀՀ քրեական օրենսգրքի 194-րդ հոդվածի 1-ին մասով, 194-ի 2-րդ մասի 4-րդ կետով (2 դրվագ), 44-155-րդ հոդվածի 1-ին մասով եւ 2-րդ մասի 9-րդ կետով, հարուցվել է հանրային քրեական հետապնդում, եւ վարույթն իրականացնող մարմնի կողմից ոստիկանությանը հանձնարարվել է հայտնաբերել եւ ներկայացնել վերջինիս:

Մարտի 27-ին վերջինս հայտնաբերվել է եւ ներկայացվել վարույթն իրականացնող մարմնին: Նրան առաջադրվել է մեղադրանք վերոնշյալ հանցավոր արարքները կատարելու համար: Միջնորդություն է ներկայացվել դատարան երիտասարդի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու համար:

Ծանուցում. հանցանքի համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝մարտի 26-ից մարտի 27-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 88 դեպք, որոնցից 3-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԴԻՊԼՈՄ ՉՈՒՆԵՆԱԼՈՒ ՊԱՏՃԱՌՈՎ

2023 թվականի սեպտեմբերին, ի պատասխան մեր տեղեկատվական հարցմանը, Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը հայտնել է, որ մարզի հանրակրթական դպրոցներում աշխատող, միջնակարգ կրթությամբ 4 զինղեկ ազատվել է աշխատանքից, 9 զինղեկ կամավոր ատեստավորման համար հայտ է ներկայացրել: Մարզպետին հարցրել ենք, թե կամավոր ատեստավորմանը մասնակից 9 զինղեկներից քանիսն է, ատեստավորումից բացասական արդյունք ունենալով, ազատվել աշխատանքից: Տավուշի մարզպետարանից հայտնել են, որ 9 զինղեկներից 2-ը, ատեստավորումից բացասական արդյունք ունենալով, ազատվել է աշխատանքից: Այսպիսով, այս ուսումնական տարում Տավուշի դպրոցներից աշխատանքից ազատված զինղեկների թիվը դարձավ 6: Մարզի հանրակրթական 76 դպրոցներում աշխատող, բարձրագույն կրթություն չունեցող 55 ուսուցչի ազատել են աշխատանքից: Աշխատանքից ազատվածների զգալի մասը ուսուցչական աշխատանքի երկար տարիների հաջողված փորձ ուներ, հմտացած էր մանկավարժության մեջ, սակայն ֆինանսական, ընտանեկան եւ այլ պայմանների պատճառով աշխատանքին զուգահեռ չէր կարողացել բուհում հեռակա սովորել, դիպլոմ ձեռք բերել:

«ՀՐԱԺԵՇՏԻ ՈՂՋՈՒՅՆ»

Տավուշի մարզի տարածքից նախկինում ադրբեջանաբնակ 4 գյուղերի տարածքները Ադրբեջանին հանձնելու մասին վարչապետ Նիկոլ Փաշինյանի հայտարարությունից հետո Տավուշի մարզի Ոսկեպար, Կիրանց, Բաղանիս, Ոսկեվան գյուղերը հայտնվել են լրատվամիջոցների ուշադրության կետրոնում, բազմաթիվ լրագրողներ են այցելում սահմանամերձ այդ գյուղեր, բնակիչներից հարցազրույցներ վերցնում: Վերջերս Ոսկեվան գյուղի բնակիչ, 27-ամյա Նվեր Եգանյանը լրատվամիջոցներից մեկին Բաղանիս գյուղում տված հարցազրույցում 4 գյուղերի տարածքները Ադրբեջանին հանձնելու մտադրության համար խիստ քննադատել է Նիկոլ Փաշինյանին, նրան համարել հոգեկան հիվանդ: Նվեր Եգանյանը լրատվամիջոցին հայտնել է, որ թավշյա հեղափոխության ժամանակ ինքը սատարել է Նիկոլ Փաշինյանին, մասնակցել ցույցերին, ճանապարհներ փակել: Հարցազրույցում Ն. Եգանյանը Նիկոլ Փաշինյանին հայհոյել է՝ նշելով Փաշինյանի «տիրու մերը, տիրու հերը», սակայն չասելով սեռական գործողություն նշանակող բառը: Նոյեմբերյանի տարածաշրջանում կեղծ լուր էր տարածվել, որ այդ հարցազրույցի պատճառով Ն. Եգանյանին ձերբակալել են: Իրականում այդ հարցազրույցը Նվեր Եգանյանը տվել էր Բաղանիսում՝ Ռուսաստան մեկնելու ճանապարհին: Այժմ նա գտնվում է Ռուսաստանում, նրա հարցազրույցը հեղափոխության մասնակցի «հրաժեշտի ողջույնն» էր Նիկոլ Փաշինյանին:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԹՄՐԱՄՈԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԽԱՂԱՄՈԼՈՒԹՅՈՒՆ

ՍԱ ԱՐԴԵՆ ԿԱԽՎԱԾՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇ Է

«Թմրամոլությունը եւ խաղամոլությունը դարձել է օրակարգ»,- ասում է իրավապաշտպան, փաստաբան Նինա Կարապետյանցը: Վերջին շրջանում Google Treands-ի հավաքած տվյալներից հասկանում ենք, որ Հայաստանում ամենաշատ որոնվող կայքերը օնլայն խաղադրույքի կայքերն են: Իրավապաշտպանը կարծում է, որ սա արդեն կախվածության ցուցանիշ է, ինչին էլ գումարվում է նաեւ թմրամոլությունը: Խոսելով ռիսկերի մասին՝ Նինա Կարապետյանցը պնդում է, որ սա կործանիչ ռիսկեր ունի:

«Շատ մեծ ռիսկեր կան: Հասարակությանը բարոյալքելու, սնանկացնելու, կախվածության մեջ գցելու համար է սա: Սա կործանարար երեւույթ է հատկապես մեր նման փոքր երկրների եւ ժողովուրդների համար: Այս ռիսկերը ունի նաեւ թմրամիջոցների կտրուկ աճը: Հատկապես վերջին տարում սրանք մեծ աճ են գրանցել, մինչեւ անգամ իրավապահներն են արդեն ակնհայտորեն վատ տեքստով խոսում, խոստովանում, որ չեն հասցնում նման քանակի դեմ, ֆիզիկապես չեն հասցնում կանխարգելման պրոցեսներ իրականացնել: Սա պատահական պրոցես չի, սրանց տարածումը պատահական բնույթ չի կրում, այլ մտածված է: Թեպետ շատերը կասեն՝ սա հավանականության տեսություն է, բայց իրապես փոքր երկիրը քայքայելու համար կան հատուկ տեխնոլոգիաներ: Տեխնոլոգիայի մաս են կազմում եւ՛ թմրամոլությունը, եւ՛ խաղամոլությունը, դրանց ակտիվ տարածումը: Քիչ եկամուտ ունեցող մարդիկ չեն կարող խաղալ, շատ եկամուտ ունեցող մարդիկ գուցե հաճույքի համար փորձեն, բայց երբ մարդիկ խաղի մեջ դնում են իրենց վերջին գույքն ու ունեցվածքը, ծնողների թոշակը, երեխաների սոցնպաստը, դա արդեն կործանարար է»:

Խոսելով նաեւ բանակում տարածված թմրամոլության եւ խաղամոլության մասին՝ իրավապաշտպան Կարապետյանցը պնդում է, որ դա եւս այս քայքայիչ տեխնոլոգիայի մի մասն է: Բարոյալքել մարդկանց, ապակայունացնել վիճակը ներսից կարելի է հենց այսպիսի գործողություններով:

«Բոլոր այն զորամասերում, որտեղ նման դեպքեր են արձանագրվել, եւ կան նաեւ մահվան դեպքեր դրա հետ կապված, այդ զորամասի սպայական կազմը պիտի պատասխանատվության ենթարկվի: Նրանք այնտեղ ունեն բավարար չափով անձնակազմ նման պրոցեսներ թույլ չտալու եւ կանխարգելելու համար:

Ոչինչ այդքան սերնդին չի քայքայում, որքան թմրամոլությունը եւ խաղամոլությունը: Փակ տարածքում, օրինակ՝ բանակում, թույլ տալ դրանց տարածումը նշանակում է թույլ տալ ավելի քայքայվել, քան մենք ավելի քայքայված ենք այսօր»: Այն հարցին, թե պետությունն ինչ միջոցառումներ է անում, որ ոչ մի արդյունք չկա, Կարապետյանցը նշեց, որ աշխատանքներ պետության կողմից տարվում են, սակայն պետք է բացահայտել դրանց՝ Հայաստանում հարտնվելու աղբյուրը, ինչ եղանակով են գալիս: Իրավապաշտպանի խոսքով՝ թմրանյութը «օդից չի ընկնում», այսքան մեծ քանակ կա Հայաստանում, որ դա կա՛մ անօրինական ճանապարհով է բերվում, կա՛մ Հայաստանում է ստեղծվում, սակայն Հայաստանում ստեղծվելու համար բարձր որակավորմամբ մասնագետներ են անհրաժեշտ: Ինչ էլ լինի, պիտի բոլոր ճանապարհները փակվեն բերելու, արտադրելու եւ վաճառելու:

«Մենք աշխատել ենք ոստիկանության հետ, նրանք ահռելի մեծ աշխատանք են տանում, սակայն նման քանակի դեմ դժվար է մինչեւ վերջ պայքարել: Նրանք աջակցություն են խնդրում, որ տեղյակ լինելու դեպքում աջակցենք իրենց»: Իրավապաշտպանը փաստում է, որ այս խնդրի լուծման գործը ոչ միայն իրավապահների վրա է, այլ նաեւ ընտանիքի: «Ծնողները պետք է շատ ուշադիր լինեն երեխաների հարցում. տրամադրության կտրուկ փոփոխություն, անկումների, երեխաների ինքնամփոփվելու: Բոլորս սթրեսի մեջ ենք, բայց պետք է սթափ լինել: Բոլորս բոլորիս հանդեպ պետք է ուշադիր լինենք, սա այդ ժամանակաշրջանն է, ուսուցիչ, հարեւան, ծնող, ընկեր: Պետք է իրար հանդեպ ուշադիր լինենք, ինչպես պատերազմի ժամանակ, տարբեր արհավիրքների ժամանակ: Մենք կտրվել ենք իրարից, ամեն մեկս մեր հեռախոսի մեջ ենք. պիտի վերադառնանք ադեկվատ կյանքի: Չի կարելի թույլ տալ, որ հասարակությունը գնա քայքայման. սա մեր պետականության հարցին է կպնում նաեւ»:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՋԵԿՈՒՅՑ

ՎԻՃԱԿԸ՝ ՋՐԱՅԻՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Հայաստանի ջրային ոլորտում բավականին ծանր եւ բարդ իրավիճակ է. այս մասին ասաց Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոյանը Ամ տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման հարցերով հանձնաժողովի նիստում Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի (2021-2026 թթ.) 2023 թվականի կատարման ընթացքի եւ արդյունքների մասին զեկույցի ներկայացմանը:

«Ջրային ոլորտում բավականին ծանր եւ բարդ իրավիճակ է. մի կողմից բախվում ենք առկա ենթակառուցվածքների վիճակի հետ, որոնք, մեղմ ասած, լավ վիճակում չեն, մյուս կողմից՝ բախվում ենք կլիմայական ազդեցություններին եւ նրանց հետեւանքով մի շարք ջրաղբյուրների հետ կապված հարցերին, առկա ջրի պաշարներին՝ լիներն խմելու, ոռոգման, թե ջրամբարային ջրեր:

2023 թվականը բավականին բարդ եւ ծանր տարի էր այդ առումով:

Խմելու ջրի կորստի պատկերը կազմում է 63 տոկոս, որը սարսափելի մեծ թիվ է, բայց 2018 թվականին այդ թիվը կազմում էր 73 տոկոս: Այսինքն՝ իրականում ինչքան էլ 63 տոկոսը սարսափելի է, ապա 73 տոկոսը ավելի սարսափելի էր, եւ թվերի այս տարբերությունը ցույց է տալիս, որ այս ոլորտում իրականում աշխատանք կա, կորուստների նվազում կա, այլ բան է, որ բոլորս կցանկանայինք ավելի արագ տեմպով իջեցնել այս կորուստները:

Նույնը վերաբերում է ոռոգման ջրի ոլորտին, որտեղ, իհարկե, պատկերը մի փոքր մեղմ է:

Այստեղ ջրի կորուստը կազմում է 44-45 տոկոս՝ 2018 թվականի քառասունվեց տոկոսի համեմատ: Այսինքն՝ 1 տոկոսից ավել նվազում ունենք»,- ասաց Սանոսյանը:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 4 պատահար. 1 մարդ զոհվել է, 7-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

ՊՏՂԱՏՈՒՆԵՐԸ ՉԵՆ ՎՆԱՍՎԻ

Նախորդ գիշեր Արարատյան դաշտում եւ դրա նախալեռնային գոտիներում օդի ջերմաստիճանը կտրուկ նվազել է, սակայն ծաղկած պտղատուների համար վտանգավոր ցուցանիշներ չեն գրանցվել. այս մասին հայտնում են Շրջակա միջավայրի նախարարությունից:

Օդի նվազագույն ջերմաստիճանն առավոտյան՝ 06:00-07:00 ընկած ժամանակահատվածում, Արարատում գրանցվել է + 0,5C, Արտաշատում՝ + 0,8C, Մերձավանում՝ - 0,7C, Արմավիրում՝0 C, Աշտարակում՝ - 0,8C, Արենիում՝ - 0,6C, Ուրցաձորում՝ + 0,3C:

Ցածր ջերմային ֆոնը կպահպանվի նաեւ առաջիկա գիշերվա ընթացքում, սակայն մարտի 29-30-ին օդի ջերմաստիճանը հանրապետության ամբողջ տարածքում գիշերը կբարձրանա 6-8, ցերեկը՝5-6 աստիճանով:

Մարտի 27-ի լույս 28-ի գիշերը՝ լուսադեմին՝ ժամը 06:00-07:00 ընկած ժամանակահատվածում, Արարատյան դաշտի առանձին հատվածներում օդում սպասվում է 0... -1 աստիճան ցուրտ:

Մասնագիտական վերլուծությունները ցույց են տվել, որ սպասվող բացասական ջերմաստիճանի շատ կարճ տեւողությունը եւ փոքր արժեքները առանձնապես չեն կարող ազդել ծաղկած պտղատուների վրա:

ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՆՈՐՈԳՈՒՄ

Հայաստանում 2023 թվականին կառուցվել, հիմնանորոգվել ու վերանորոգվել է 803 կմ ճանապարհ, որից 556 կմ-ը՝ պետական բյուջեից իրականացվող ծրագրերի շրջանակներում:

Այս մասին ասաց տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանը ԱԺ տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման հարցերով հանձնաժողովի նիստում Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի (2021-2026 թթ.) 2023 թվականի կատարման ընթացքի եւ արդյունքների մասին զեկույցի ներկայացմանը:

«Ընդհանուր առմամբ, եթե բոլոր ճանապարհաշինական ծրագրերը միավորենք, հանրապետությունում կառուցվել, հիմնանորոգվել կամ վերանորոգվել է 803 կմ ճանապարհ»,-ասաց Սանոսյանը:

556 կմ-ն ամբողջությամբ պետական բյուջեից իրականացված ծրագրերն են: 556-ից 501-ն ամբողջությամբ արված, ավարտված աշխատանքներն են: Դեռեւս կան 55 կմ ճանապարհի աշխատանքներ, տեղադրված են առաջին կամ երկրորդ շերտը, բացակայում է վերջնական շերտը:

«Դա արել ենք մի պարզ պատճառով. արդեն նոյեմբեր կամ դեկտեմբերն էր: Չենք ցանկացել, որ որակի հետ կապված խնդիր լինի: Շինարարին ասել ենք, որ հաջորդ տարի վերջին շերտը կտեղադրենք»,- ասաց նախարարը:

Կատարվել են նաեւ սուբվենցիոն ծրագրերով իրականացված ասֆալտապատման աշխատանքներ, 210 կմ ասֆալտապատում եւ 38 կմ սալարկում:

ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՉԷ

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ՉԿԱ ՎԵՐԱԴԱՐՁ ԱՐՑԱԽ

Մարտի 20-ին կազմակերպված հանրահավաքի արդյունքներից տեղեկանալու համար ArmLur.am-ը զրուցել է Արցախի Հանրապետության ԱԺ պատգամավոր, «Արդարություն եւ վերադարձ» հասարակական կազմակերպության ղեկավար Մեսրոպ Հակոբյանի հետ:

«Այն նախաձեռնող խումբ է կազմակերպել, եւ չենք կարող դիտարկել որպես համարցախյան հանրահավաք: Դա մի քանի հասարակական կազմակերպությունների նախաձեռնությամբ է կազմակերպվել, եւ նպատակն էր բարձրացնել սոցիալական մի քանի հարցեր: Ելնելով Կառավարության հեթական որոշումներից՝ ուղղակի ակնհայտ է, որ, միեւնույնն է, ինչ որոշումներ որ կանխավ կային, ոչ մի փոփոխություն դրանք չեն կրել: Այս հարցի վերաբերյալ մենք մեր դիրքորոշումն ունենք եւ գտնում ենք, որ որեւէ սոցիալական ծրագիր չի կարող արդյունավետ լինել՝ անկախ իր ծավալից, եթե այն չի ներառում Արցախ վերադառնալու բաղադրիչը: Այս ամենին զուգահեռ՝ հայաստանյան իշխանություններն իրենց քաղաքականությունում չունեն հայերին Արցախ վերադարձնելու բաղադրիչ եւ, հետեւաբար, միտում ունեն փակելու Արցախի հարցը: Անդրադառնալով Արցախից բռնի տեղահանված անձնաց տրամադրվող 40+10 հազար դրամական աջակցությանը՝ Հակոբյանը նշեց, որ ծրագիրը մինչեւ տարեվերջ շարունակելու մասին վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտարարել էր իր ասուլիսի ժամանակ, սակայն չի բացառում նաեւ հանրահավաքների ազդեցությունն այդ որոշման վերաբերյալ: «Բնականաբար հանրահավաքներն ունեցան իրենց ազդեցությունը, քանի որ բողոքներ կլինեին, եւ մարդիկ չէին ընդունի ծրագրի դադարեցման մասին որոշումը: Կարծում եմ՝ այս հանգամանքը հաշվի է առնվել, սակայն, միեւնույնն է, ես (նաեւ շատ արցախցիներ) մնում եմ այն կարծիքին, որ սոցիալական ծրագրերը չեն կարող երբեւէ բավարարել արցախցիների պահանջը, քանի դեռ դրանք չեն պարունակում իրենց մեջ Արցախ վերադառնալու բաղադրիչ»,- նշեց Հակոբյանը:

ArmLur.am-ի հետ զրույցում Մեսրոպ Հակոբյանը ներկայացրեց նաեւ «Արդարություն եւ վերադարձ» հասարակական կազմակերպության առաջիկա քայլերն ու ծրագրերը: Նրա խոսքով՝ հասարակական կազմակերպությունը, մարտի 30-ից սկսած, կձեռնարկի այցեր դեպի Հայաստանի 10 մարզեր՝ հանդիպելու տվյալ մարզերում բնակություն հաստատած բռնի տեղահանված երիտասարդ արցախցիների հետ: «Մարտի 30-ին այս ծրագրի շրջանակում մեր առաջին այցը կկատարենք Կապան: Ծրագիրը նպատակ ունի լսելի դարձնել արցախահայության ձայնը, վեր հանել Հայաստանում բնակություն հաստատած՝ բռնի տեղահանված արցախցիների խնդիրները, քննարկել եւ ի մի բերել այն բոլոր հնարավոր տարբերակներն ու ուղիները, որոնք կարող են օգնել բոլորիս վերադառնալ Արցախ, քննարկել այս պահին տիրող իրավիճակը, հասկանալ, թե ինչ խնդիրների են բախվում արցախցի երիտասադրները Հայաստանում, եւ գտնել դրանց լուծման ճանապարհային քարտեզը, հասկանալու արցախցի երտասարդների խնդիրներն ու պահանջները, եւ թե նրանք ինչպես են տեսնում հայերի վերադարձն Արցախ: Բոլոր 10 մարզերի այցելությունից հետո կկատարվի արդյունքների վերլուծություն, եւ կներկայացվեն ՀՀ Կառավարությանը՝ որպես արցախցիների ձայն»,- նշեց Մեսրոպ Հակոբյանը:

Ծրագրի ավարտին ՀԿ-ն հանդես կգա մամուլի ասուլիսով, որի ընթացքում կներկայացվի քննարկումների ամփոփ պատկերը: Աշխատանքների արդյունքները կներկայացվի ՀՀ կառավարությանը, միջազգային կազմակերպություններին եւ բարերարներին հետագա ծրագրերի իրականացման նպատակով:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ԹԱՏՐՈՆ

ՄԻ ՇԱՐՔ ԾՐԱԳՐԵՐ ԵՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ

Երեւանի քաղաքապետարանը թատերական կյանքն էլ ավելի ակտիվացնելու նպատակով 2024 թվականին մի շարք ծրագրեր է իրականացնելու: Այս մասին հայտարարել է քաղաքապետ Տիգրան Ավինյանը՝ Թատրոնի համաշխարհային օրվա կապակցությամբ հրապարակած իր ուղերձում:

«Սիրելի՛ երեւանցիներ, թատերաշխարհի սիրելի՛ ներկայացուցիչներ,

ջերմորեն շնորհավորում եմ բոլորիս Թատրոնի համաշխարհային օրվա առիթով: Վստահաբար կարելի է ասել, որ Երեւանի մշակութային կյանքում թատրոններն առանցքային տեղ են զբաղեցնում:

Այդ երեւանցիներն ու մեր քաղաքի հյուրերն են, նշանավոր դերասաններն ու բեմադրիչներն են, հանդերձապահներն ու տեխնիկական մասի պատասխանատուներն են իրենց ներկայությամբ եւ հոգատարությամբ շենք- շինություններն ապրեցնում՝ արժանացնելով դրանք թատրոն կոչվելու պատվին:

Այդ մշակութային օջախներն են քաղաքին շունչ ու կենդանություն տալիս՝ ճարտարապետությանը հաղորդելով մշակութային դիմագիծ:

Երեւանի քաղաքապետարանը թատերական կյանքն էլ ավելի ակտիվացնելու նպատակով մի շարք ծրագրեր է իրականացնելու այս տարի: Մասնավորապես, հրատարակվելու են համաշխարհային ճանաչում ունեցող 5 ժամանակակից դրամատուրգների շուրջ 20 պիեսներ:

Այնուհետեւ կհայտարարվի «Թատերական Երեւան» անունը կրող դրամաշնորհի բաց մրցույթը, որի շրջանակում նոր թարգմանված պիեսների հիման վրա թատրոններին եւ թատերական նախաձեռնություններին ֆինանսական աջակցություն կտրամադրվի բեմադրություններ իրականացնելու նպատակով:

Վստահեցնում եմ՝ մեր քաղաքում մշակութային, այդ թվում՝ թատերական կյանքը շարունակաբար աշխուժանալու է թե՛ որակական, թե՛ քանակական առումով: Միայն այս ճանապարհով է հնարավոր Երեւանը դասել աշխարհի առաջավոր մշակութային քաղաքների շարքին, ինչն էլ մեր միասնական նպատակն է:

Սիրելի՛ երեւանցիներ, քաղաքի հյուրե՛ր, մեկ անգամ եւս շնորհավորում եմ բոլորիս Թատրոնի համաշխարհային օրվա կապակցությամբ»,- ասված է քաղաքապետի ուղերձում:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

«ԹԱՏՐՈՆԸ ՍԿՍՈՒՄ Է ԿԱԽԻՉՆԵՐԻՑ»

ՆՇՎՈՒՄ Է «ԱՐՏԱՎԱԶԴ» ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅԱՄԲ

Թատրոնի միջազգային օրը մասնագիտական միջազգային տոն է թատրոնի բոլոր աշխատողների դատվին, որը նշվում է ամեն տարի՝ մարտի 27-ին, ամբողջ աշխարհում:

Այն առաջին անգամ ողջ աշխարհում նշել են 1961 թվականին, երբ ՅՈՒՆԵՍԿՕ-ին կից Թատրոնի միջազգային ինստիտուտի 9-րդ կոնգրեսի պատվիրատուների նախաձեռնությամբ կյանքի է կոչվել, սակայն առաջին անգամ Թատրոնի միջազգային օրը տոնել են 1948 թվականին Պրահայում: Հայաստանում այն սկսել են նշել դեռեւս ԽՍՀՄ տարիներին: Խորհրդային միությունը Թատրոնի միջազգային օրվա միջոցառումներին մաս է կազմել 1959 թվականին՝նախքան ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից օրվա պաշտոնական սահմանումը. հենց այդ ժամանակ է Մոսկվայում ստեղծվել Թատրոնի միջազգային ինստիտուտի խորհրդային ազգային կենտրոնը:

«Թատրոնը սկսում է կախիչներից». ռուս գրող եւ թատերական ռեժիսոր Կոնստանտին Ստանիսլավսկիի մտքերից ծնված այս խոսքը ժամանակի ընթացքում թեւավոր ասույթ է դարձել, որը ճիշտ բնութագրում է թատերական աշխարհը: Թատրոնում չկան երկրորդական դերեր եւ մասնագիտություններ, հետեւաբար թատրոնի օրը թատերական ոլորտի բոլոր ներկայացուցիչների համար է՝ դերասանների, թատերական ռեժիսոր-բեմադրողների, պրոդյուսերների, լուսային օպերատորների, հնչյունային օպերատորների, մոնտաժողների, ձեւավորողների եւ նույնիսկ տոմսավաճառների ու հանդերձարանում աշխատողների:

Թատրոնի միջազգային օրը Հայաստանում նշվում է ոլորտի «Արտավազդ» ամենամյա մրցանակաբաշխությամբ:

Այս տարի 23-րդ մրցանակաբաշխության շրջանակում ներկայացված են մի շարք հայտնի եւ հաջողակ գործեր, անվանի եւ նոր անուններ: Այս տարի, ինչպես արդեն տեղեկացրել էինք, մրցանակաբաշխությունը նվիրված է լինելու Հայաստանի Հանրապետության ժողովրդական արտիստ Արմեն Ջիգարխանյանի հիշատակին: Այս տարի «Լավագույն տղամարդ դերակատար» անվանակարգում ներկայացված են Արա Դեղտրիկյանը, Տիգրան Գաբոյանը, Իշխան Ղարիբյանն ու Արսեն Գրիգորյանը, «Լավագույն կին դերակատար» անվանակարգում՝ Թեհմինե Խաչատրյանը, Եվա Զաքարյանը, Արաքսյա Մելիքյանը եւ Սիրանուշ Լազյանը:

«Երկրորդ պլանի լավագույն տղամարդ դերակատար» անվանակարգում ներկայացված դերասաններն են Էրվին Ամիրյանը, Վարդան Կուղիանոսյանը, Հովհաննես Օհանյանը եւ Գեւորգ Դավթյանը, իսկ «Երկրորդ պլանի լավագույն կին դերակատար» անվանակարգում՝ Ելենա Վարդանյանը, Նառա Սանթոյանը եւ Քրիստինե Ալիխանյանը:

«Լավագույն ներկայացում» անվանակարգում կպայքարեն Կ. Ստանիսլավսկու անվան ռուսական դրամատիկական թատրոնի «Փոքրիկ ողբերգություններ», Գյումրու Վ. Աճեմյանի անվան դրամատիկական թատրոնի «Ինկած բերդի իշխանուհին» եւ «Ֆակտորի փրոդաքշն» ազատ թատերախմբի «Փայլոու» ներկայացումները:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԹԱՏՐՈՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐ

«ԹՔԱԾ ՈՒՆԻ» ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔՆԵՐԻ ՎՐԱ

Չնայած այն բանին, որ Երեւանում փակվում կամ մեկ այլ թատրոնի է միացվում մի ուրիշ թատրոն, ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը շնորհավորական ուղերձ է հղել թատրոնի միջազգային օրվա կապակցությամբ, որում մասնավորապես ասվում է.

«Թատրոնն այն հայելին է, որում արտացոլվում է հասարակությունը՝ իր վարքականոններով, կենցաղավարությամբ, բարոյահոգեբանական նկարագրով, արժեհամակարգով եւ գեղագիտական ընկալումներով: Թատրոնը նաեւ այն ճանապարհներից մեկն է, որը հասարակությանը տանում է դեպի կատարելագործում, ինքնակրթում եւ հոգեւոր ապաքինում»:

ArmLur.am-ը այս առթիվ կապ հաստատեց «Գոյ» թատրոնի գեղարվեստական ղեկավար Արթուր Սահակյանի հետ, որը մեզ հետ զրույցում նշեց, որ նա «թքած ունի» Ժաննա Անդրեասյանի շնորհավորանքների վրա:

«Ժաննա Անդրեասյանը չնչին աղջիկ է: Ես թքած ունեմ իր շնորհավորանքների վրա, որովհետեւ ինքը թշնամի է: Մի բան ասում է, մյուս բանն անում: Անիմաստ աղջիկ է, կատարածու»,- ասաց գեղարվեստական ղեկավարը: Սահակյանի խոսքով՝ Անդրեասյանը տեղյակ չէ, որ նա ԿԳՄՍ նախարարի պաշտոնին ժամանակավոր է:

«Գիտե՞ք ինչ, նա տեղյակ չի, որ ժամանակավոր է, բայց նա նաեւ զոհ է: Վաղն առավոտը բացվելու է, եւ այդ ամենի համար պատասխաններ պետք է տրվեն: Հիմա այդ աղջիկը պատասխան պետք է տա, բայց ոչ միայն այդ աղջիկը, այլեւ բոլոր այդ մորուքով աղջիկ-տղաները, որոնք հիմա քանդում են ամեն ինչ»,- ասաց Սահակյանը՝ սահմանափակելով զրույցը:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2024թ.-Ի ԱՊՐԻԼԻ 26-ԻՆ՝ ԺԱՄԸ 11:00-ԻՆ, «ՄԵՏԱՂԱՄԱՆԵՂԵՆ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ-Ի ԳՐԱՍԵՆՅԱԿՈՒՄ /ՀԱՍՑԵՆ՝

Գ. ԶՈՎՈՒՆԻ 1փ. 142/ ԿԿԱՅԱՆԱ «ՄԵՏԱՂԱՄԱՆԵՂԵՆ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ-Ի ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ, ՈՐԻ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԵՆ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԱՐՑԵՐԸ.

Գ

1. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇՌԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ,
2. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒՅԹԻ ԵՎ ՎՆԱՍԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ,
3. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒՅԹԻ ԵՎ ՎՆԱՍԻ ԲԱՇԽՄԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄ,
4. ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄ,
5. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՈՒԴԻՏՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԻ ՆՇԱՆԱԿՈՒՄ ԵՎ ՆՐԱ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ,
6. ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ,
7. ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ԿԼԻՆԻ

Ապրիլի 4-5-ը Երեւանում առաջին անգամ կկայանա սամբոյի աշխարհի գավաթի խաղարկությունը, որն այսուհետ պարբերական բնույթի կկրի:

Լրագրողների հետ զրույցում այս մասին հայտնեց Հայաստանի սամբոյի ֆեդերացիայի նախագահ Միքայել Հայրապետյանը:

«Երեւանում կայանալիք աշխարհի գավաթը կկրի մշտական բնույթ: Միջազգային ֆեդերացիան ամեն տարի հենց մեզ է տվել գավաթի անցկացումը: Միջազգային կառույցի ուշադրությունը դեպի Հայաստան բարձր է, եւ ցուցանիշները, որոնք մենք գրանցում ենք, կրկին բարձրության վրա են: Վստահ ենք՝ մեր սամբիստները միջազգային հարթակներում բարձր արդյունքներ կգրանցեն»,-ասաց Հայրապետյանը:

Վերջինիս խոսքով՝ աշխարհի գավաթի խաղարկությունը ստուգատես կլինի մարզիկների համար մայիսին կայանալիք Եվրոպայի առաջնությունից առաջ:

«Հայաստանի հավաքականը գավաթի խաղարկությանը յուրաքանչյուր քաշում կունենա երկու մասնակից: Դրանից բացի, Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված մարզիկներից մի քանիսն էլ հանդես կգան միջազգային ֆեդերացիայի հովանու ներքո ձեւավորված փախստականների թիմից»,-ասաց նա:

Երեւանում կայանալիք աշխարհի գավաթի խաղարկությանը դեռեւս մասնակցության հայտ չեն ներկայացրել Ադրբեջանի եւ Թուրքիայի թիմերը:

Ապրիլի 2-ից սկսած՝ միջազգային ֆեդերացիայի ներկայացուցիչները կժամանեն Երեւան: Գավաթի խաղարկությանը, ընդհանուր առմամբ, կմասնակցի 17 երկրի մոտ 300 մարզիկ:

Հայաստանի սամբոյի հավաքականի գլխավոր մարզիչ Վովիկ Խոջայանը մեծ սպասելիքներ ունի երեւանյան մրցաշարից:

«Տղաները ոգեւորված են, եւ ես լիահույս եմ, որ աշխարհի գավաթի խաղարկությունում մենք դրական արդյունքներ կունենանք»,-ասաց նա:

Սամբոյի աշխարհի գավաթի խաղարկությունը կկայանա «Գազպրոմ Արենա»-ում, իսկ մուտքն ազատ կլինի:

ԿԱՊՈՒՄ Է ԻՐ ՀԵՏ

Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմի գլխավոր մարզիչ Ալեքսանդր Պետրակովը Չեխիայից կրած պարտությունը կապում է իր թերի աշխատանքի հետ:

«Խաղացին, ու պարտվեցինք: Միակ դրականն այն է, որ տղաները ջանք չեն խնայում: Ուշադիր լսում են մարզումների ընթացքում եւ անում, ինչ պահանջվում է: Ֆուտբոլում, սակայն, կարեւորն արդյունքն է, բայց արդյունք չկա: Արդյունքը բացասական է, նշանակում է ես՝ որպես գլխավոր մարզիչ, թերի եմ աշխատել»,-ասել է Պետրակովը:

Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմը 2024 թվականի ընկերական երկրորդ խաղում մրցեց Չեխիայի ընտրանու հետ: Հայաստանի թիմը զիջեց 1:2 հաշվով: Ազգային ընտրանու կազմում միակ գնդակը խփեց Էդգար Սեւիկյանը, որը կիսապաշտպանի անդրանիկ գոլն է հավաքականում: Ազգային ընտրանին հաջորդ ընկերական խաղը կանցկացնի հունիսի 4-ին՝ հյուրընկալվելով Սլովենիայի հավաքականին:

●Մարտի 30-ին Երեւանի պատանի հանդիսատեսի թատրոնում տեղի կունենա «Սիդը» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝1000-3000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ

ՖԻՆԱՆՍՆԵՐ

ՀԱՐՑ. Ինչպես է ներկայացվում շահումով խաղերի կազմակերպման եւ անցկացման կանոնակարգը:

Արտակ Գրիգորյան (31 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Շահումով խաղի կազմակերպչի կողմից ներկայացված շահումով խաղի կազմակերպման եւ անցկացման կանոնակարգի կամ դրանում կատարվող փոփոխությունների, լրացումների համաձայնեցումն իրականացվում է «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի եւ խաղատների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն:

Շահումով խաղի կազմակերպիչը, շահումով խաղի կազմակերպման եւ անցկացման կանոնակարգը կամ դրանում կատարվող փոփոխությունները, լրացումները համաձայնեցնում է լիազոր մարմնի հետ՝ նախքան դրանց կիրառումը, ներկայացնելով լիազոր մարմին՝ երկու օրինակից: Լիազոր մարմինը 15-օրյա ժամկետում ընդունում է որոշում՝ կանոնակարգին, առաջարկվող փոփոխություններին, լրացումներին համաձայնություն տալու կամ դրանք մերժելու մասին: Եթե լիազոր մարմինն ընդունել է կանոնակարգին կամ դրա փոփոխություններին, լրացումներին վերապահումով համաձայնություն տալու մասին որոշում, ապա կազմակերպիչը պարտավոր է այդ որոշումը ընդունելուց հետո՝ 10 օրվա ընթացքում, լիազոր մարմին ներկայացնել ուղղված փաստաթղթերը, որից հետո լիազոր մարմինը 5-օրյա ժամկետում հայտատուին տրամադրում է լիազոր մարմնի հետ համաձայնեցված շահումով խաղի կանոնակարգի կամ փոփոխությունների, լրացումների համաձայնեցված մեկ օրինակը: Եթե կազմակերպիչը վերը նշված որոշումն ընդունելուց հետո՝ 10 օրվա ընթացքում, ուղղված փաստաթղթերը լիազոր մարմին չի ներկայացնում, ապա լիազոր մարմնի որոշումը՝ կանոնակարգին կամ դրա փոփոխություններին, լրացումներին վերապահումով համաձայնություն տալու վերաբերյալ, համարվում է չեղյալ:

ՀՀ ֆինանսների նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 29.07.2004թ. թիվ 1164-Ն որոշման՝ եթե շահումով խաղի կազմակերպչի կողմից շահումով խաղի կազմակերպման եւ անցկացման կանոնակարգում առաջարկվող փոփոխությունների կամ լրացումների արդյունքում փոփոխվելու են N 4 ձեւում նշված՝ շահումով խաղերի մասին ներկայացված տվյալները, ապա կազմակերպիչը ներկայացնում է նաեւ շահագործման համար նախատեսված խաղային սարքավորումների ծագման սերտիֆիկատների պատճենները եւ շահումով խաղերի մասին տվյալները՝ համաձայն N 4 ձեւի:

Շահումով խաղի կազմակերպիչը ներկայացնում է նաեւ շահագործման համար նախատեսված խաղային սարքավորումների ծագման սերտիֆիկատների պատճենները եւ շահումով խաղերի մասին տվյալները՝ համաձայն N 4 ձեւի, այն դեպքում, երբ փոփոխվում են շահումով խաղերի վերաբերյալ տվյալներ, որոնք չեն հակասում համաձայնեցված շահումով խաղերի կազմակերպման եւ անցկացման կանոնակարգին:

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Անշարժ գույքի նկատմամբ գրանցված իրավունքների վերաբերյալ վկայականը կորցնելուց հետո տրամադրվու՞մ է արդյոք դրա կրկնօրինակը:

Ասատուր Ստեփանյան (29 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. 2019 թվականի հուլիսի 1-ից հետո վկայականի կրկնօրինակ չի տրամադրվում, այլ վկայականը փոխարինվում է նոր գրանցման վկայականով՝ պետական գրանցման իրական ամսաթվի վերաբերյալ նշումով:

ՀՀ կադաստրի կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ընդ որում՝ մինչեւ 2019 թվականի հուլիսի 1-ը տրամադրված գրանցման վկայականը նոր գրանցման վկայականով փոխարինվում է դրա համար դիմումը «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ներկայացվելու օրվանից 2-րդ աշխատանքային օրը, որի համար վճար չի գանձվում:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Հայաստանցի վունդերկինդ ուսանողը ստացավ երկրի բարձրագույն բժշկական մրցանակը՝ պապիլոմավիրուսների եւ մակաբույծների բուժման մեթոդ հայտնաբերելու համար:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անվճար կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________
Ազգանուն՝ ____________
Առաքման հասցե՝ ____________
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	- 3 - 7	+ 8 + 13
Կոտայքի լեռներ	- 3 - 6	+ 8 + 11
Կոտայքի նախալեռներ	- 2 + 1	+12 + 13
Գեղարքունիք	- 3 - 6	+ 6 + 9
Լոռի	- 1 + 3	+11 + 13
Տավուշ	- 1 + 2	+13 + 16
Արագածոտնի լեռներ	0 + 3	+ 8 + 10
Արագածոտնի նախալեռներ	+ 3 + 6	+12 + 15
Արարատ	+ 2 + 5	+15 + 17
Արմավիր	+ 1 + 4	+15 + 17
Վայոց ձորի լեռներ	- 3 - 6	+ 8 + 11
Վայոց ձորի նախալեռներ	+ 2 + 4	+15 + 17
Սյունիքի հովիտներ	+ 5 + 8	+15 + 19
Սյունիքի նախալեռներ	- 1 + 3	+11 + 15
ԼՂՀ	- 1 + 3	+10 + 14
Երեւան	+ 6 + 8	+ 11 + 13

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **27.3.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*